

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/3

5 մարտի 2013թ.

Քննարկվեց քաղաքացիներ Աշոտ Հակոբյանի և Վահագն Վարդանյանի դիմում-գանգատը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքը կիրառելու դեմ:

Քաղաքացիներ Աշոտ Հակոբյանի և Վահագն Վարդանյանի գանգատում մասնավորապես նշված է.

Քաղաք Երևան, Պարոնյան 21/2 հասցեում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքը (723,7 ք.մ. մակերեսով և 0.0344 հա հողամասով) համաձայն 12.04.2006թ. տրված թիվ 2012747 սեփականության իրավունքի վկայականի՝ համատեղ սեփականության իրավունքով պատկանել է մեզ երկուսիս, որը 29.03.2012թ. առուվաճառքի պայմանագրով վաճառել ենք քաղաքացի Հենրիկ Գասպարյանին՝ 60.000.000 դրամ արժեքով: Մեր կողմից կատարված գործարքը համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ համարվել է ԱԱՀ-ով հարկվող գործարք: Նշված գույքի կադաստրային արժեքը, համաձայն ԱԳԿ ՊԿ 07.08.2012թ. թիվ ԱՏ-03.08.2012-1-0311 տեղեկանքի, կազմել է 182.485.549 դրամ և ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի՝ հարկման նպատակով ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է դիտվել կադաստրային արժեքը:

Առուվաճառքի գործարքը կատարել ենք Արաբկիրի նոտարական տարածքի նոտար Կարինե Ադամյանի մոտ և նշված նոտարական տարածքում, համաձայն «Կառավարության 19.02.2009թ. թիվ 199-Ն որոշման, ապահովված չէր իրազեկման նյութերը՝ ֆիզիկական անձի իրականացրած գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկները ներկայացնելու, գումարների վճարման կարգը և ժամկետները սահմանելու մասին: Մինչդեռ, այս ամենի մասին տեղեկացել ենք ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից ստացված ծանուցումների արդյունքում: Այցելել ենք հարկային տեսչություն և օրենքով սահմանված կարգով ներկայացրել ԱԱՀ-ի հաշվարկներ ու կատարել դրանցից առաջացած հարկային պարտավորությունները՝ բացի հաշվարկվող տուգանքի գումարներից:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք կատարել հարկային պարտավորությունների վերահաշվարկ և ազատել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով հաշվարկվող տուգանքի գումարներից:

«ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ Աշոտ Հակոբյանի և Վահագն Վարդանյանի դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Աշոտ Հակոբյանին և Վահագն Վարդանյանին (այսուհետ նաև դիմումատուներ) համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը 29.03.2012թ-ին առուվաճառքի պայմանագրով վաճառվել է քաղաքացի Հենրիկ Գասպարյանին 60.000.000 դրամով:

Վերոգրյալ գործարքի մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկներ ներկայացնելու և սահմանված կարգով ու ժամկետներում ԱԱՀ վճարելու մասին դիմումատուները տեղեկացել են ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից ուղարկված ծանուցումների արդյունքում, որից հետո այցելել են հարկային տեսչություն և օրենքով սահմանված կարգով ներկայացրել ԱԱՀ-ի հաշվարկներ ու վճարել ԱԱՀ-ի գծով առաջացած պարտավորությունները:

Դիմումատուները տեղեկացվել են նաև, որ վերոգրյալ գործարքի հետ կապված ԱԱՀ-ի գծով պարտավորություններից բացի պետք է վճարեն նաև <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքի գումարը:

Սույն գործի քննարկման ընթացքում պարզվեց, որ առկա չէ որևէ հիմնավոր ապացույց, որը կվկայեր դիմումատուների նկատմամբ <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքի գծով պարտավորությունների հաշվարկման կամ այդ տուգանքի գծով պարտավորությունների առաջադրման մասին:

Տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ դիմումատուները գանգատարկում են <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքի կիրառումը, այն դեպքում, երբ չկա որևէ ապացույց նման պարտավորության առաջադրման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը եզրակացնում է, որ դիմումատուների դիմում-գանգատն անթույլատրելի է:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի <գ> ենթակետի. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմումն անթույլատրելի է>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

Քաղաքացիներ Աշոտ Հակոբյանի և Վահագն Վարդանյանի դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

